№ 39 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 22 1903 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 22 № 39

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ; Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռեպերտուարի խնդիրը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Իմ ախոյեանը.

ՌԵՊԵՐՏՈՒԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերութիւնը վերջացրել է իր բանակցութիւնները արտիստական թատրոնի վերաբերմամբ և պայմանաւորվել է վերցնելու թատրոնը յաջորդ 1903/4 ձմեռվայ հայերէն մշտական ներկայացումների համար։

Ինչպէս յայտնի է, անցած ձմեռ հայերէն ներկայացումներ լինում էին շաբաթական մէկ անգամ՝ երկուշաբթի օրերը։ Այժմ որոշված է շաբաթական երկու ներկայացում տալ՝ երկուշաբթի և հինգշաբթի օրերը։ Այդպիսով ամբողջ ձմերային սեզոնի ընթացքում պէտք է տրվեն 50—60 հայերէն ներկայացում։

Մենք մի յօդուածով, որ նուիրել էինք թատրոնին, յայտնեցինք, որ հետաքրքրութիւն պահպանելու համար դէպի հայոց բեմը անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել ռեպերտուարի վրա։ Մենք ստիպված ենք զգում մեզ նորից կրկնել այդ բանը, աչքի առաջ ունենալով այն մեծ նշանակութիւնը, որ մենք տալիս ենք այդ հանգամանքին։

Եթէ անկարելի համարվի ներկայացումների կէսը նոր պիեսներով հետաքրքրելի դարձնել, անհրաժեշտ է, որ գոնէ նրա երրորդ մասը համապատասխանէ այդ պահանջին։ Ուրեմն անհրաժեշտ է մօտ քսան նոր պիես ունենալ պատրաստի, որպէս զի մի կողմից տարվայ ընթացքում կարեւորութիւն չը լինի այս ու այն կողմ ընկնել և պիեսներ որոնել, իսկ միւս կողմից հնարաւոր լինի սեզոնի սկզբում որոշ համակարգութեամբ դասաւորել ներկայացումները։

Անկասկած՝ շատ ցանկալի է, որ երեւան գային ինքնուրոյն պիեսներ, որոնց բովանդակութիւնը վերցված լինէր մեր երկրի և մեր ազգաբնակութեան կեանքից, որոնց մէջ շօշափված լինէին մեզ հետաքրքրող կենսական հասարակական խնդիրները և որոնք առիթ տային հասարակութեանը մտածութեան նիւթ դարձնելու իր կեանքի երեւոյթները որոշ լուսաբանութեամբ։ Որքան մեզ յայտնի է, կան մի երկու պիես, որոնք պէտք է ներկայացվեն դրամատիկական ընկերութեանը։ Բայց յոյս կապել ինքնուրոյն պիեսների վրա անկարելի է։ Նրանք սակաւաթիւ են և նրանցից քչերն են աջող լինում։ Գլխաւոր ուշադրութիւնը պէտք է ուղղված լինի դէպի թարգմանական պիեսները։ Թէ ռուսաց և թէ արտասահմանեան թատրոնական գրականութեան մէջ կայ գեղեցիկ թատրոնական գրուածքների պատկառելի թիւ, որոնցից պէտք է ընտրութիւն անել հայոց բեմի համար։

Մենք աւելորդ ենք համարում ասել, որ թարգմանութիւնները պէտք է կատարվեն բաւարար կերպով, կանոնաւոր հայերէն լեզուով։ Այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Մենք անհրաժեշտ ենք համարում շեշտել մի ուրիշ պահանջի վրա, որ նոյնպէս շատ կարեւոր է և որ պէտք է աչքի առաջ ունենան թարգմանութիւն անողները։ Այդ այն է, որ շատ անգամ թարգմանական պիեսների մէջ գործ է ածված լինում արհեստական, չափազանց գրական լեզու։ Չը պէտք է մոռանալ, որ ներկայացումը պէտք է կեանքի պատկերի արձագանք լինի, ուստի և հերոսների գործածած լեզուն պէտք է լինի կենդանի, բնական, խօսակցական, այնպէս, ինչպէս որ մարդիկ առօրեայ կեանքի մէջ իրապէս խօսում են։

Դրամատիկական ընկերութիւնը այժմեանից իսկ պէտք է սկսէ լուրջ կերպով զբաղվել ռեպերտուարի հարցով առանց յետաձգելու, որովհետեւ մեծ աշխատանք և ժամանակ է պահանջվում այդ գործի աջող կազմակերպութեան և իրագործութեան համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Փետրվարի 16-ին

Փետրվարի 8-ին դումայում կայացաւ մեշչանների ընդհանուր ժողով, նախագահութեամբ քաղաքային աւագ պ. Գ. Արծրունու. Ժողովի քննութեան էր ենթարկված քաղաքի հասարակութեան այս տարվայ նախահաշիւը։ Մեշչանների դրամարկղը այնքան աղքատ է, որ շատերը կը հետաքրքրվեն անշուշտ մի այսպիսի քաղաքի հասարակութեան տարեկան ելքի ու մուտքի մասին։ Մի շատ ողորմելի ելք ու մուտք, որը կարելի է համեմատել գրեթէ մի յետ ընկած գիւղի նախահաշւի հետ։—Տարեկան մուտք ապահովում է մեշչանների կասսայում (դումայի հաշիւն առանձին է) մօտ 3000 ռուբլի (հասարակութեան խոտատեղերից, արօտավայրերից և այլն), իսկ ելքը աւելի է 5000 ռուբլուց (քաղաքային ռուսաց ուսումնարանին նպաստ, խոտատեղերի պահապաններին, հարկաժողովներին, ջրանցքների ծախսերի միացորդ և այլն)։ Ուրեմն դեռ մի 2000 ռ. էլ մեշչանների դրամարկղը դեֆիցիտ պէտք է ունենայ։ Այդ դեֆիցիտը ծածկելու համար ժողովը որոշեց քաղաքի 1000-ից աւելի ընտանիքները բաժանել 9 կարգի, որոնց վրա աստիճանաբար հասարակական ծախսեր դնել, սկսած երկրորդ կարգից (առաջին կարգը, իբրեւ որբեր և չքաւորներ, տուրքից ազատ է), նշանակելով 50 կոպէկից մինչև 10 ռուբլի տուրք իւրաքանչիւր ընտանիքին։ Ահա այդ ձեւով է հաւասարեցնվում մեր քաղաքի մեշչանների տարեկան հաշւեկշիռը…

Նոյն այդ ժողովում դրված էր նաև քաղաքային բժիշկ հրաւիրելու հարցը։ Ձը զարմանաք, ընթերցող, որ Նոր-Բայազէտը մինչև այժմ դեռ իր սեփական բժիշկը չունի։ Նախագահ պ. Արծրունին քաղաքացիների տրամադրութեանն էր յանձնել բժիշկ հրաւիրելու հարցը, որը տարիներից ի վեր ձգձգվում է և կրկին առկախ մնում։ Սակայն ժողովը այս անգամ էլ կրկին անհնար համարեց բժիշկ հրաւիրելը, յատկապէս փող չունենալու պատճառով։ Է՞հ, ինչ վնաս, թող էլի մի քանի տարի անցնի, քաղաքի հասարակութիւնը բաղդի բերմամբ գուցէ կը հարստանայ և այն ժամանակ վստահ կերպով կը հրաւիրէ քաղաքային մի բժիշկ. իսկ առ այժմ քաղաքի բոլոր հիւանդները, աչքացաւի, թոքախտի, ստամոքսի և այլ ցաւագարներ, որոնց թիւը լեգէօններ են կազմում մեզանում, թող մնան Ալլահի կամքին, կամ թէ, եթէ ֆիզիկապէս ամուր են, թող առ այժմ կռուեն սոսկալի հիւանդութիւնների դէմ և «ճանով» առողջանան, ինչպէս շատերն են յայտնել մեր ժողովներում. Ամօթ մեր քաղաքի հասարակութեան, որ բժիշկ հրաւիրելու առաջնակարգ խնդիրը ամենայետին տեղն է դնում իր առօրեայ կեանքի հարցերի թւում։

Ի դէպ. մեր քաղաքի մեշչանների ժողովները առհասարակ շատ անփոյթ են վերաբերվում դէպի հասարակութեան առօրեայ տնտեսական հարցերը։ Օրինակ. քաղաքային աւագը իր պարտքը կատարած լինելու համար ժողով է նշանակում, ժամանակ որոշում, հրաւիրաթուղթ ուղարկում հասարակութեան անդամներին, որոնք ստորագրում են և պարտաւոր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ԱԽՈՅԵԱՆԸ

(Ուսուցչի յիշատակարանից)

IX

Հ. գիւղը, ուր գտնվում էինք մենք, մեր երկրի լեռնուտների մէջ այն կորած-մոլորված տեղերիցն էր, որոնք ամենայն իրաւամբ կարող են արջի բներ անուանվել։ Քաղաքից և մեծ ճանապարհներից հեռու՝ մի անդնդախոր, նեղ ձորահովտի մէջ, որից դուրս գալու համար դէպի սարաւանդներով անցնող միակ ճանապարհը հարկաւոր էր առնուազը երեք ժամ գործ դնել՝ նա ոչնչով չէր կարող դրաւել օտար այցելուին, որ մի-երկու ժամ այնտեղ մնալուց յետոյ՝ պէտք է անտանելի ձանձրոյթ զգար և ամէն կերպ աշխատէր հեռանալ, փախչել երկու ամեհի լեռների մէջ սեղմված այդ գիւղից, որ ուրիշ գիւղերի գեղեցիկ բնութեան հրապոյրն անգամ չունէր։ Եւ ես, եթէ առողջ լինէի, հաւանական է, աւելորդ ոչ մի րոպէ չէի մնայ այնտեղ—այնքան ձանձրալի, միատեսակ էին թւում ինձ իմ սենեակիս պատուհանից այդ տափակ, հողածածկ, գետնի հետ հաւասարված կտուրները, այդ կլոր, ժայռ քարերից՝ առանց նոյն իսկ ցեխի շաղախի դարսված պատերը, այդ կեղտոտ, պատառոտած շորերով կանայք ու տղամարդիկ, այդ բոպիկ, կիսամերկ, բարկ արևի տակ այրված-խորոված երեխաները… Բիրտ, կոպիտ, անհամբոյր բնութիւնը դրել էր իր դրոշմը նաև գիւղի բնակիչների վրա, որոնք յայտնի էին շրջակայ գիւղերին իրանց ծայրայեղ կոշտ ու կոպիտ բնաւորութեամբ։

Բայց, երևի, այդպէս չէր մտածում և դատում օրիորդ Թագուհին. ոչ մի անգամ ես նրա բերանից չը լսեցի մի գանգատ գիւղի կամ նրա բնակիչների դէմ։ Ընդհակառակը՝ սենեակիս պատուհանից ես յաճախ տեսնում էի, որ նա ամբողջ ժամերով, մի կտրի վրա հաւաքած իր շուրջը երեխաներին՝ ինչ-որ բան էր պատմում նրանց կամ խաղում նրանց հետ, իսկ կիրակի օրերը, երբ գիւղի տղամարդիկ մնում էին տանը, Թագուհին մի առանձին եռանդով ու ոգևորութեամբ, կանգնած հին, խարխուլ եկեղեցու ստուերում հաւաքված ամբոխի մէջ, ինչ որ մի բան էր բացատրում, ապացուցանում։

Սկզբում ես ուշադրութիւն չէի դարձնում այդ հանգամանքի վրա, համարելով որ Թագուհին Հ. գիւղում ես իրագործում է իր «ծրագիրը», բայց յետոյ, երբ ականջիս հասան մի քանի տարօրինակ լուրեր, մի [illegible] կասկած սկսեց անհանգստացնել ինձ և ես վճռեցի խօսել նրա հետ այդ մասին։

X

Ոտքիս վէրքն սկսել էր փոքր առ փոքր լաւանալ. արդէն կաղ ի կաղ ես կարողանում էի դուրս գալ տանից և փոքրիկ պտոյտներ անել գիւղամիջին։ Մի երեկոյ, երբ ամբողջ գիւղը քնած էր արդէն, երբ այդ խոր ձորի մէջ երբեմնապէս լսելի էին միայն շների հաչոցը և հեռու գետակի միանման, անդադրում աղաղակը, ես և օրիորդները նստած էինք դուրսը, դրան մօտ շինված քարեայ նստարանի վրա։ Ուղիղ ձորագլխին կանգնած լիալուսինը պարզ լուսաւորում էր գիւղի այն մասը, ուր մենք էինք նստած։

Բաւական երկար ժամանակ լուռ էինք մենք. ամէն մէկը մեզանից խորասուզված էր իր մտքերի ու զգացմունքների մէջ. ոչ ոք չէր կամենում ընդհատել տիրող լռութիւնը։

Մի ամբողջ շաբաթ էր արդէն, որ ես չէի կարողանում ճանաչել Թագուհուն։ Նրա սովորական անհոգ ծիծաղը, կատակները տեղի էին տուել մի արտաքոյ կարգի լրջութեան և մտախոհութեան։ Ինձ թւում էր, որ նա մի-ինչ որ ծանր հարց էր լուծում իր մէջ։ Շատ անգամ երկու քոյրերը ինձանից ծածուկ,—մի բան, որ առաջ ես երբեք չէի նկատել,—տաք-տաք վիճում էին միմեանց հետ։ Սկզբում ես աշխատում էի հաւատացնել ինձ, որ Թագուհին էլ ինձ նման վիրաւորված է սիրոյ նետից և նրա տրամադրութեան փոփոխութիւնը վերագրում էի այդ հանգամանքին, բայց յետոյ աւելի լաւ կշռադատելով դիտողութիւններս՝ եկայ այն, ինձ համար ոչ-մխիթարական համոզման, որ նրա մտածմունքները ոչ մի կապ չունեն ինձ հետ։ Ուղիղ է, նա նոյնչափ սիրալիր և հոգատար էր իմ վերաբերմամբ, ինչպէս և առաջ, այսուամենայնիւ ես չէի կարող չը նկատել, որ ինչքան իմ առողջութիւնս դէպի լաւն էր գնում, այնքան աւելի հեռանում, սառչում էր նա ինձանից, այնքան աւելի արագութեամբ չքանում էր այն ցանկալի մտերմութիւնը, որ ես սկսված էի կարծում հիւանդութեանս առաջին օրերում։

—Ոտքս արդէն լաւանում է, օրիորդներ,—ընդհատեցի ես տիրող լռութիւնը,—ժամանակ է, կարծեմ, պատրաստվելու և ճանապարհ ընկնելու դէպի քաղաք, մանաւանդ որ օգոստոսն էլ արդէն վերջանալու վրա է։

Ոչ ոք ինձ չը պատասխանեց։

—Դպրոցում հոգալու բաներ շատ կան,—շարունակեցի ես,—բացի սրանից հրաժարված մի-երկու ուսուցչների տեղ հարկաւոր կը լինի նոր ուսուցիչներ կամ վարժուհիներ հրաւիրել։

Մարիամը մի րոպէական ակնարկ գցեց Թագուհու վրա։

—Կարծում եմ, որ իմ փոխանակ ես պէտք է նոր վարժուհի հրաւիրէք դպրոցի համար,—ասաց Թագուհին ցածրաձայն, առանց ինձ նայելու։

Նրա ձայնը հազիւ նկատելի կերպով դողդողում էր։

—Ի՞նչպէս,—զարմացած բացականչեցի ես,—դուք հրաժարվո՞ւմ էք։

Թագուհին լռում էր։ Ես ապշած նայում էի Մարիամի երեսը, կամենալով նրանից իմանալ այն խօսքերի բացատրութիւնը, որոնք սրածայր դաշոյնի պէս ծակեցին իմ սիրտը։

—Ի՞նչ պէտք է անել,—րոպէական լռութիւնից յետոյ խօսեց Մարիամը,—դուք գիտէք Թագուհու յամառութիւնը. եթէ մի բան նա միտքը դրեց՝ բոլոր սուրբերն էլ որ հաւաքվեն, էլի չեն կարող յետ կանգնեցնել նրան այդ մտքից։

—Բայց ինչո՞ւ, ինչ պատճառով. Թեմական տեսուչը, հոգաբարձուները՝ բոլորն էլ գոհ են ձեզանից…

—Այդ չէ, այդ չէ պատճառը,—ընդհատեց խօսքս Թագուհին և մի անգամ խոր շունչ քաշելուց յետոյ շարունակեց,—ես վճռել եմ մնալ այստեղ…

—Այս գիւղո՞ւմ։

—Այո, հէնց այս գիւղում։

Թագուհու ձայնն ունէր իր որոշ շեշտը վճռական րոպէին. Նրանից ես հասկացայ, որ վիճելն այդ հարցի մասին բոլորովին ապարդիւն բան կը լինէր։ Բայց ես չը կարողացայ զսպել ինձ։

—Գիւղացիներն, ուղիղ է, մի քանի բան հաղորդել են ինձ ձեր դիտաւորութեան մասին,—խոր հառաչանք քաշելուց յետոյ ասացի ես Թագուհուն,—բայց ես կարծում էի, որ նախ քան վերջնական վճիռ կայացնելը, գոնէ մի անգամ կը խորհրդակցէիք ինձ հետ. կարծեմ, ես բաւական ապացոյցներ եմ տուել, որ արժանի եմ ձեր վստահութեան, օրիորդ։

—Իզուր մի վիրաւորվէք, պարոն… ուսուցիչ,—սկսեց կատակել Թագուհին,—ես ձեզ ոչինչ չասացի, որովհետև գիտէի, որ դուք հակառակ կը լինէք այդ վճռին։

—Տարօրինակ գուշակութիւն, բացականչեցի ես տաքացած, ինչի՞ց գիտէիք։

—Գիտէի։

—Դուք մարգարէ էք, երևի։

—Կանայք մի քանի հանգամանքներում մարգարէ լինելու յատկութիւն ունեն, այդ դուք չը գիտէք։

Թագուհին խորհրդաւոր կերպով ժպտում էր։ Օրիորդ Մարիամը՝ տեսնելով, որ խօսակժում ներկայ լինել ժողովին, բայց նշանակած ժամին գալիս են, որքա՞ն էք կարծում, մի 10—15 հոգի, մինչդեռ քաղաքը ունի 1000-ից աւելի անդամներ, որոնք կարող են և իրաւունք ունեն մասնակցելու ժողովներին և վճռելու հասարակութեան անյետաձգելի հարցերը։ Ի՞նչ անուն տալ այդպիսիներին։

Կուռն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 20-ին

Թոյլ տուէք «Մշակի» միջոցով համառօտ հաշիւ տալու հասարակութեանը իմ պատասխանատուութեամբ Թիֆլիսի Ժողովարանում տեղի ունեցած ներկայացումների մասին, անցած 1902/3 սեզօնի ընթացքում։

Ընդամենը եղել է 19 ներկայացում, որոնցից 5-ը ինքնուրոյն գրուածքներ էին և 14 թարգմանական։ Պիեսների մեծ մասը դրամաներ և կօմեդիաներ էին, 2 ֆարս, 2 վօդևիլ և 1 պատմական պիես։ Բոլոր ներկայացումներին զանազան ժամանակ մասնակցել են երկուսեռից 55 սիրող։

Ծախս եղել է հետևեալը. պ. ռէժիսօրը ստացել է 1100 ր., յուշարարը 70 ր., պարիկմախերները 73 ր., ծառան 29 ր. 50 կ., շորերի և ռէկվիզիտի վրա ծախսվել է 162 ր. 15 կ., դերերի արտագրութեան և գրքերի վրա 54 ր. 65 կ., մի հեղինակին հօնօրար է տրված 15 ր., յայտարարութիւններ և մանր ծախսեր 35 ր. 93 կ.,—ընդամենը 1540 ր. 23 կոպէկ։ Գալով մուտքին, պէտք է ասեմ, որ համաձայն ժողովարանի հետ կապած պայմանի ստացել եմ 897 ր. 60 կ., որ դուրս գալով ծախսից, մնում է 642 ր. 63 կոպէկ դեֆիցիտ։

Իշխ. Մ. Թումանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 21-ին

Ստիպված եմ յայտնել, որ «Մշակի» № 37-ի մէջ տպված «Ընտրող» ստորագրութեամբ նամակը՝ քահանաների ժողովի մասին իմս չէ։

Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սղնախ, փետրվարի 4-ին

Ձեր լրագրի № 24-ի «Մանրանկարում» կարդացի պ. Ն. Ն.-ի նամակը, որի հեղինակը բողոքում է այն, իբր թէ՝ ես դատարանում սուտ վկայութիւն եմ տուել։ Գործը պարզելու համար թոյլ տուէք բացատրելու այս բոլորը։

1898 թւին Սղնախի հայ հասարակութիւնը մի յանձնաժողով ընտրեց, որի պարտքն էր, քննել քաղաքիս երեք եկեղեցիների և նրան պատկանեալ մոմապահեստի հաշիւները և պահանջել այդ ղեկավարող անձերից կորած գումարները։ Ի միջի այլոց ընտրվեցայ և ես՝ և անդամներից էլ նախագահ յանձնաժողովի. սակայն աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մենք ընտրված էինք 1888—1898 թ. եղած հաշիւները քննելու և ոչ թէ յետոյ եղած Ն. Ամիրխանեանցի, ուստի և ես ամենայն իրաւամբ ասացի դատարանում և կրկնում եմ, որ Ն. Ամիրխանեանցի և այլոց համար, որոնք եղել են 1898 թ. յետոյ, յանձնաժողով չէ ընտրվել և գոյութիւն չէ ունեցել։ Ն. Ամիրխանեանցը այդ յանձնաժողովի անդամներից մէկն էր և նրա պարտքն էր քննել նախընթացներինը և ոչ թէ իր հաշիւները. սակայն միւս անդամները մոռացան ամենայն ինչ, թողեցին առաջիններին, դուրս եկան իրանց իրաւունքների սահմանից և Ն. Ամիրխանեանից սկսեցին հաշիւներ պահանջել և վերջը գործն էլ հասաւ դատարանին, որովհետև մի ժողովում Վ. Աւագեանը վիրաւորեց Ամիրխանեանցին։ Այս էլ ասեմ, որ այդ յանձնաժողովը, որը պէտք է նախնական հաշիւները քննէր, մի տեսակ հոգաբարձական ժողովի փոխվեց, գործերի ղեկն իրանց ձեռն առան և փոխանակ իրանց իսկական պարտքը կատարելու, սկսեցին իրար դէմ գործել և անձնական հաշիւներով զբաղվել, որի վաղճանն այն եղաւ, որ ես հրաժարվեցայ նախագահութիւնից։

Եղիշէ քահ. Տէր-Աստուածատրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին օրերը Թիֆլիսի շրջակայքում եղանակները լաւացել են և օդը տաքացել է։ Արօտների բուսականութիւնը, որ շատ նուազ էր, սկսել է աճել։ Ոչխարապահները երկիւղ էին կրում կորցնելու իրանց հօտերը, մանաւանդ գառներին։ Եթէ նորից եղանակի խիստ փոփոխութիւններ տեղի չունենան, անասնապահները կարող կը լինեն շուտով կազդուրել իրանց կենդանիներին։

—

Թիֆլիսի օրիորդաց առաջին գիմնազիայում փետրվարի 19-ին տեղի ունեցաւ ծնողական ժողով գիմնազիայի դիրեկտօրի նախագահութեամբ։ Ժողովը զբաղվեց մի քանի հարցերով, որոնք վերաբերում են աշակերտուհիների տնային դաստիարակութեան։ Խիստ ցանկալի է, որ այդպիսի համակրելի ժողովներ, որոնք մօտեցնում են ծնողներին ուսումնարանական վարչութիւնների հետ, կազմակերպվին և Թիֆլիսի միւս դպրոցներում.

—

Կառավարիչ սենատը բացատրեց, որ քաղաքային դումաները իրաւունք չունեն արգելելու բանալ քաղաքի որ և է մասում ոսկեղէնների վաճառման համար խանութներ և քաղաքացիներն իրաւունք ունեն բանալ այդպիսի խանութներ որտեղ կը կամենան։

—

Երկրաբանների համառուսական ժողովը կարծիք յայտնեց, թէ անհրաժեշտ է ռէֆօրմի ենթարկել համալսարանները և բարձրագոյն տեխնիքական դպրոցները՝ վերակազմելով նրանց լայն ինքնավարութեան հիմունքներով։

—

Փետրվարի 19-ի գիշերը, Թիֆլիսում, Ուգօլնայեա և Բուժէյնայեա փողոցների անկիւնում գտնվող Ալէլովի տանը, մի արծաթագործի արհեստանոցում, ոստիկանութիւնը գտաւ դրամանենգների, որոնք կեղծում էին ռուբլիանոց արծաթեայ դրամներ։ Դրամանենգներից մէկը, Գէօրգի Մարիամով, որ բռնվեց յանցանքի տեղում, Թիֆլիսի նահանգի Դիղօմ գիւղի բնակիչ է։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց դրամատիքական ընկերութիւնը վերցրել է արտիստական ընկերութեան թատրօնը յաջորդ տարվայ համար աւելի էժան գնով, քան անցեալ տարի, այն է՝ 285 ռուբլիով իւրաքանչիւր ներկայացման համար։

—

Տաշկենտից գեներալ Իվանօվ հեռագրում է զինուորական մինիստրին, թէ երկրաշարժի նշանները Անդիժանում կրկնվում են մինչև հիմա, համարեա ամեն օր։ Փետրվարի 8-ին տեղի ունեցան ստորերկրեայ զօրեղ հարուածներ՝ չորս անգամ մի օրվայ ընթացքում. փետրվարի 4-ին երկրաշարժի թեթև ցնցումն զգացվեց նաև Կրասնօվօդսկում։

—

Բագուի քաղաքագլուխ Նօվիկօվի կարգադրութեամբ, փետրվարի 19-ին, գիւղացիների ազատութեան յիշատակի օրը, Բագուի քաղաքային ինքնավարութեան դիւանատներում սովորական պարապմունքներ տեղի չունեցան։ Ծառայողները ազատված էին պարապմունքներից նաև այն բոլոր հաստատութիւնների մէջ, որոնք ենթարկվում են քաղաքային ինքնավարութեան իրաւասութեան։

—

Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրօնը, ինչպէս լսում ենք, ձմերային հետևեալ սեզօնի համար նորից վարձով է տուած Կրասօվին՝ դրամատիքական ներկայացումներ տալու։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Վերջապէս, երկար ձգձգումներից յետոյ, կօնսիստօրիան հաստատեց տեղիս սուրբ Փրկիչ եկեղեցու ծխականների ցանկալի որոշումը, յատկացնելով նոյն եկեղեցու քառաձայն խմբի ծախս 2400 ռուբլի։ Մեր նորընտիր երէցփոխ Խ. Ջիլինկարեանը մօտ երկու ամիս է կանոնաւոր կերպով բաժանում է յիշեալ գումարն անխտիր կերպով 50 հոգուց բաղկացած խմբին։ Խումբը երգում է եկեղեցում կիրակի և տօն օրերին խմբապետ Պօղոս Տէր-Կարապետեանցի ղեկավարութեամբ»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Գողութիւնները մեզանում գնալով աւելի յանդուգն և սարսափելի չափեր են ստանում։ Այսպէս, Վարդանանց տօնի երեկոյեան, անյայտ չարագործները, կոտրելով տեղիս ս. Կարապետ եկեղեցու փողարկղը, տանում են 50 ր.։ Գողութիւնը նկատվել է միայն հետևեալ առաւօտը։ Իսկոյն յայտնվում է ոստիկանութեան և բանտարկվում է ժամկոչներից մէկը, որը փակել էր նախընթաց երեկոյեան եկեղեցու դուռը։ Սակայն մինչև այժմ էլ գողը մնում է անյայտ և փողերը կորած. բայց վերջը ոստիկանութիւնը և երէցփոխը համոզվում են, որ եկեղեցու ծառայողներից չեն գողերը, այլ ուրիշները, ուստի և արձակվում է բանտարկված ծեր ժամկոչը։ Այսօր, տեղիս գործակալ Մուրադբէկեան վարդապետը քարոզ խօսեց եկեղեցում և հրաւիրեց գողին՝ գնալ նրա մօտ գողացած 50 ռուբլիով, խոստովանվել և «Աստուած թողութիւն շնորհեսցէ»ով ներումն ստանալ, աւելացնելով, որ բացի խոստովանահայրից ոչ ոք չի իմանայ գողի ով լինելը։ Սպասում ենք, թէ ո՞ր յիմարը կը բանայ հայր Խորէնի դուռը՝ խոստովանվելու համար»։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Փետրվարի 15-ին տեղի ունեցաւ մի գրական երաժշտական երեկոյթ Գրիգոր Արծրունու մահվան տասնամեայ տարեդարձի առթիւ, ի նպաստ չքաւոր աշակերտների։ Երգում էր պարոնների և օրիորդների մասնակցութեամբ պ. Տ. Առաքելեանի քառաձայն կազմած խումբը. սօլօ երգողների մէջ յատկապէս աչքի էր ընկնում օրիորդ Մակենդոնեանցը և պ. Մ. Եղիազարեանը իր յաջող ձայնով. օր. Մակենդոնեանցը երգեց «Կռունկ» զգացված և արժանացաւ բուռն ծափահարութեան։ Կարդացվեցան Գր. Արծրունու, «Մշակ»-ից քաղված, առաջնորդողներից, որոնք գրված են ութսունական թւականներում և մի քանի ոտանաւորներ ուղղված Գր. Արծրունու յիշատակին»։

—

ԹԷՄԻՐԽԱՆՇՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Տեղիս հայոց եկեղեցին այնպիսի ցաւալի դրութեան մէջ է, որ նկարագրել անգամ անկարելի է։ Ներս մտնողը կը կարծէ թէ գիւղական եկեղեցի է, որը ունի 15—20 ծուխ ժողովուրդ։

ցութիւնը այլ կերպարանք է ստանում, վեր կացաւ և շտապ քայլերով հեռացաւ մեր մօտից։

—Չեմ հասկանում... րօպէական լռութիւնից յետոյ ասացի ես։

—Ի՞նչ չը հասկանալու բան կայ։ Ես համոզեցի գիւղացիներին սեպտեմբերից ուսումնարան բանալ և ինքս էլ մնում եմ այստեղ վարժուհի։ Կարծեմ վատ բան չեմ արել։

—Ո՞վ է ասում, բայց դուք մտածել էք ձեր մասին. դուք կարո՞ղ էք թաղել ձեզ այս յետ ընկած գիւղում, արջերի այս ծուղակում, այս բթի գիւղացիների մէջ... բարկացած խօսեցի ես։

—Օհօ, ես նոր-նոր բաներ եմ լսում ձեզանից, պարոն ուսուցիչ. ո՞ւր են ձեր նախկին քարոզները գիւղացիների մասին. այդպէ՞ս էք սիրում դուք գիւղը, բացականչեց օրիորդ Թագուհին և մեծ ու լայն բաց արած աչքերով սկսեց չեչտակի նայել իմ երեսին։

Ես ամաչեցի և գլուխս քաշ գցեցի։ Անշուշտ այդ խօսքերը դուրս թռան իմ բերանից. սիրոյ եսականութիւնն էր, որ այդպէս խօսեցնում էր ինձ։

—Գիտէք ինչ, պարոն ուսուցիչ,—մեղմ ձայնով դարձաւ ինձ Թագուհին,—դուք քրոջս հետ գնացէք քաղաք և շարունակեցէք ձեր գործը, իսկ ես կը մնամ այստեղ. ես սաստիկ սիրեցի այս գիւղը, սրանց աշխոյժ, սիրելի, ընդունակ երեխաներին. սիրեցի և գիւղացիներին։ Ճիշտ է, այստեղի գիւղացիները փոքր ինչ աւելի կոշտ ու կոպիտ են, քան ուրիշ գիւղերում, բայց դա արտաքուստ է միայն. նրանք շատ բարեսիրտ մարդիկ են և իրանք էլ հասկանում են ուսման նշանակութիւնը։ Ուսումնարանն այս գիւղում աւելի է հարկաւոր, քան մի ուրիշ տեղում։ Գիւղացիներն ինձ խոստացան ամեն յարմարութիւններ տալ, եթէ մնալու լինեմ այստեղ վարժուհի։ Ես խօսք տուի նրանց և կարծում եմ, որ օրերս անօգուտ չեմ անցկացնի այստեղ։

Ես լսում էի Թագուհու խօսքերը խորին թախծութեամբ։ Վերջին օրերի իմ ոսկի երազները օդն էին ցնդում... Ես զգում էի մի ներքին, խուլ տանջող ցաւ։ Ողբս վէրքն էր նորից սկսել կսկծել ու ցաւը տարածել ամբողջ մարմնիս մէջ, թէ մի նոր թարմ վէրք էր բացված իմ սրտում—այդ մասին ես չէի կարողանում ինձ հաշիւ տալ։ Թագուհին անշուշտ հասկացաւ իմ հոգեկան դրութիւնը։

—Կարծում եմ, որ մենք ինչպէս բարեկամներ կը բաժանվենք միմեանցից, այնպէս չէ՞. դարձաւ ինձ Թագուհին և իր գեղեցիկ, սիրալիր աչքերը՝ խնդրողական հայեացքով ուղղեց իմ աչքերիս։

—Բայց ես կը կամենայի, որ մենք ամենեւին չը բաժանվենք միմեանցից, բացականչեցի ես յանկարծ, ու ինձ համար ես բոլորովին անակնկալ կերպով բռնեցի օրիորդի ձեռքը, որ նստած էր իմ կողքին։

Թագուհին րօպէապէս շփոթվեց ու ցնցվեց ամբողջ մարմնով։

—Ո՛չ, ո՛չ, դա անկարելի է, ցաւ, բայց վճռական ձայնով ասաց Թագուհին և վեր կացաւ տեղից։—Ձեր ճանապարհն ուրիշ է,—շարունակեց նա կանգնած,—դուք ունէք արդէն ձեր գործը, ձեր ուսումնարանը, որի երեխաները այնքան սիրում են ձեզ. ես ցանկութիւն չունեմ զրկել նրանց ձեզանից։

—Բայց չէ՞ որ ձեզ էլ պակաս չեն սիրում ձեր դպրոցում։

—Գուցէ, բայց առանց ինձ էլ գործը այնտեղ կարող է շատ լաւ գնալ, իսկ այստեղ ես կը սկսեմ մի նոր գործ, որ առանց ինձ հազիւ թէ շուտով սկսվի։ Վերջապէս ես վճռել եմ մնալ այստեղ, ինչ էլ որ պատահի և ինչպիսի էլ որ լինի իմ անձնական ապագան, և իմ վճիռս անդրդվելի է, իսկ ձեզ մնալ այստեղ աւելորդ է. ձեզ համար այստեղ գործ չը կայ. բացի սրանից՝ ինձ յայտնի է, որ դուք ընտանեկան ամուր կապերով կապված էք քաղաքի հետ. յիշեցէք ձեր քոյրերին. ինչ պէտք է անեն նրանք այստեղ. այ, նրանց համար այս գիւղը յիրաւի կը լինի գերեզման։

—Նրանք կարող են մնալ քաղաքում, առարկեցի ես։

—Ո՛չ, ո՛չ. ես ոչ ոքից զոհ չեմ պահանջում. ես ինքս պատրաստ եմ զոհի։

«Քաղաքավարի մերժում»—անցաւ իմ մտքից. սիրտս լցվեց. ես պատրաստ էի երեխայի նման հեկեկալ։

—Ուրեմն դուք ինձ չէք սիրում, արհամարհում էք իմ զգացմունքը, ասացի ես և աչքերս թախանձագին ուղղեցի Թագուհուն։

—Ի սէր Աստուծոյ, այդպէս մի մտածէք. եթէ ես ամուսին ընտրելու լինէի, ո՞վ գիտէ, գուցէ ամենից առաջ կընտրէի ձեզ, բայց այժմ ես ամուսնանալու մասին չեմ մտածում. իմ միտքս այժմ պատված է մի այլ բանի շուրջը...

Թագուհու դէմքը ուղղված էր լուսնի կողմը։ Եւ յիրաւի նրա չքնաղ դէմքի վրա, նրա կրակոտ աչքերի մէջ վառվում էր այդ րօպէին մի այնպիսի մաքուր ոգևորութիւն, որ շատ հեռու էր երկրային սիրուց... Ես ակամայ ենթարկվեցի այդ ոգևորութեան։ Ամօթի բուռն զգացմունքը, որ յանկարծակի զգացի ես, այրում էր երեսս։ Ես ակամայ գլուխս քաշ գցեցի։

Մի րօպէ լռութիւն տիրեց. ոչ ոք մեզանից չէր խօսում։

—Բայց որպէս զի դուք չը մնաք այն համոզման մէջ, թէ ես ձեզ չեմ սիրում,—դիմեց ինձ Թագուհին մի վճռական քայլ անելով դէպի ինձ,—ահա ձեզ, իբրև յիշատակ, իմ սիրոյ համբոյրը, առաջինը և վերջինը։

Եւ Թագուհին, երկու ձեռքով ամուր բռնելով գլուխս, մի բոլորովին անսպասելի ջերմ համբոյր դրօշմեց ճակատիս և նախ քան իմ սթափվելս՝ արագութեամբ վազեց դէպի հարեւան տունը, ուր ապրում էին երկու քոյրերը։

Ա՜խ, այդ սիրոյ համբոյրը... ես երբէք չը կարողացայ մոռանալ նրան, թէպէտև նա մի քնքոյշ քրոջ, մի մայրական համբոյր էր, թէպէտև չը կար նրա մէջ ոչ կիրք, ոչ տռփանք...

Երկար մտածում էի ես դեռ ես դուրսը, նոյն քարեայ նստարանի վրա, ու խորին մտածմունքների մէջ ընկղմած՝ նայում էի լուսնի լուսով լուսաւորված այդ խեղճ, տգեղ, անօգնական գիւղին, որ ձորահովտի մէջ որբի նման կուչ էր եկած իմ առաջ։ Ես զգացի, որ Թագուհին իր կուսական սրտի ամբողջ սէրն ու զգուանքը, իր բոլոր փայփայանքները պահում էր նրա համար։

Երջանիկ գիւղ. երջանիկ ախոյեան...

—

Երկրորդ օրն արդէն ձիու վրա նստած—իմ ոտքս դեռ բոլորովին չէր առողջացել,—միայնակ բարձրանում էի ես այն խոր անդունդից, որի մէջ գտնվում էր Հ. գիւղը, դէպի սարահարթի միակ ճանապարհը։ Մի քանի ժամվայ անտանելի ջանքերից յետոյ՝ ես վերջապէս բարձրացայ ձորագլուխը և վերջին անգամ հայեացքս ուղղեցի դէպի վայր, դէպի հազիւ նկատելի գիւղը, ուր ես թողնում էի իմ սրտին անչափ սիրելի մի էակ։ Ջղային յանկարծական ցնցումներ ուժգնութեամբ մի քանի անգամ սեղմեցին կոկորդս, բայց ես շուռ տուի երեսս և ամուր մտրակելով ձիուս՝ քշեցի նրան դէպի քաղաքի ճանապարհը...

Եւ հիմա, տարիներ անցնելուց յետոյ, երբ ես զրկված եմ սար ու ձոր չափելու հնարաւորութիւնից, երբ բնութեան անյագ կարօտը գարնան գալուն պէս, իբրև մի ներքին խուլ ու ձանձրացուցիչ ցաւ, սկսում է մորմոքալ իմ մէջ օրեր, ամիսներ շարունակ՝ ես չը գիտեմ մի այլ միջոց հանգստացնելու ցաւս, եթէ ոչ առանձնանալ, քաշվել մի անկիւն և հոգով վերանալ դէպի այն երանաւէտ վայրերը, ուր մի օր ես թափառում էի Թագուհու հետ միասին, յիշել այն գիւղը, ուր ես թողի նրան, զգալ ճակատիս վրա նրա «սիրոյ համբոյրը»։

Արդեօք, ո՞ւր ես դու այժմ, չքնաղ, անգին արարած. արդեօք դու էլ չես շրջում հիմա ինձ նման յուսաբեկ ու թեւաթափ...

Ա. Մխիթարեան

Եկեղեցու զանգակատունը մէկ Թեթև քամու է սպասում, որ բոլորովին քարուքանդ լինի և պատճառ դառնայ եկեղեցին փակելու զատկական տօներին։ Բայց այդ մասին մտածող չը կայ։ Դիմում ես երէցփոխին՝ «եկեղեցին պարտքեր ունի, ասում է, առաջ—պարտքերը ծածկել հարկաւոր է»։ Քահանային ես դիմում, նա էլ ասում է. «ապրուստի միջոց տուր և ապա մտածիր դրա մասին»։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Անհաւասար ույժերի ամուսնութիւնը մեզանում շուտ շուտ է կրկնվում։ Օրինակ. Վերին գիւղից 55 տարեկան մի մարդ Ց. Ն., որը իր ամբողջ կեանքը անցրել էր Բագւում, ուր կորցրել էր ամեն բան և առողջութիւն, կմախք դարձած մէկը, ամուսնացաւ 16 տարեկան մի առողջ, գեղեցիկ որբ աղջկայ հետ։ Սկզբներում աղջիկը չէր համաձայնվում, սակայն մի ամբողջ ամսվայ խրատն ու սպառնալիքը խնամակալների կողմից համոզեցին խեղճին։ Նորերս էլ մի 28 տարեկան պարոն ամուսնացաւ 12-ից ոչ աւել տարեկան մի աղջկայ հետ»։

—

ՍՕՉԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 13-ին, տեղիս սակաւաթիւ հայ-երիտասարդութեան նախաձեռնութեամբ, ռուսաց աղքատախնամ ընկերութեան Թէյարանի սրահում, Վարդանանց տօնի առիթով կայացաւ հայկական գրականական-երաժշտական երեկոյթ։ Այս երկրորդ անգամն է, որ Սօչիում երիտասարդութիւնը՝ բարոյական զուարճութիւններից բոլորովին զուրկ հայ համայնքին քիչ ուրախութիւն է պատճառում, երկրորդ անգամն է, որ ժողովուրդը լսում է բեմից խմբովին հայերէն երգեր, բերանացի ոտանաւորներ, տեսնում է կենդանի պատկերներ և փոքրիկ կատակերգութիւններ։ Տպաւորութիւնը քաջալերիչ է. գիւղացիք և քաղաքացիք շատ սիրով այս անգամ էլ պատւել էին իրանց ներկայութեամբ երեկոյթը։ Սրահը ամբողջովին լի էր և որովհետև երեկոյթը զուտ հայկական էր, օտարազգիներից քիչեր ներկայ էին։ Հանդիսականների ճնշող մեծամասնութիւնն էր գիւղական հասարակութիւնը։ Ծրագրի բովանդակութիւնը հետևեալն էր. բանախօսութիւն՝ «Վարդանի կենսագրութիւնը». երգեր—«Իմ հայրենեաց», «Լռեց ամպերը», «Զարթիր սիրտ իմ», «Մեր հայրենիք», «Զան-գիւղում», «Ալակեօզ» և «Թող փչէ քամին». ոտանաւորներ—«Հիմի էլ լռենք», «Հիմի էլ խօսենք», «Ի՞նչ անենք» և «Հայերիս Թուքը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Քէմնից, փետրվարի 24-ին

(Միթվայդայի հայկական երեկոյթը)

Երէկ, փետրվարի 23-ին, կայացաւ Միթվայդայի հայ ուսանողական նախաձեռնութեամբ կազմակերպված առաջին հայկական երեկոյթը։ Ուսանողութիւնը ուսանող Հ. Քալանթարեանի ղեկավարութեամբ, ոչ մի ջանք չէր խնայել երեկոյթի աջողութեան համար։ Այդ ջանքերը փառաւորապէս պսակվեցան։

Արդէն սովորական մի բան է, որ Գերմանիայում հայկական երեկոյթներ կազմակերպելու առաջին և գլխաւոր նպատակն է ծանօթացնել գերմանացիներին մեր արդի կեանքի հետ։

Ամբողջ երեկոյթի կենտրոնը կազմում էր յայտնի գրող Իլզէ Ֆրապան-Ակունեան, որը Միթվայդայի հայ ուսանողութեան կողմից հրաւիրված էր երեկոյթին մի դասախօսութիւն կարդալու հայ ժողովրդի արդի վիճակի մասին։ Եւ յարգելի տ. Ֆրապան-Ակունեանը, ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկը, եկաւ Համբուրգից Միթվայդա և երեկոյթին կարդաց իր պատրաստած դասախօսութիւնը՝ «Հայերի համար» վերնագրով։

Երեկոյթը տեղի ունեցաւ Միթվայդայի «Stadt Chemnitz» կոչված դահլիճում, որը զարդարված էր կանաչ ծառերով ու գիրլեանդներով, որը մի առանձին տեսարան էր ներկայացնում կախած բազմաթիւ դրօշակներով. լաւ ճաշակով զարդարված Թէ դահլիճը և Թէ բուֆէտը արդէն հանդիսաւորներին գուշակում էին երեկոյթի աջող անցնելը։ Ամեն կողմից, հէնց երեկոյթի սկզբից լսվում էին հետևեալ խօսքերը. «fein, fein, wunder schön»։ Մուտքը հրաւիրագրներով էր, ներկայ էր մեծ բազմութիւն։

Երեկոյթը սկսվեց ժամը 8-ին. քաղաքային օրկեստրը նուագեց «Մինիօնի ուվերտիւրան», որից յետոյ ուսանողական քառաձայն խումբը ղեկավարութեամբ ուսանող Խօսրովեանի երգեց «Մեր հայրենիք», արժանանալով անթիւ ծափահարութեան։ Ապա Ֆրապան-Ակունեանը ամբիօն բարձրացաւ և կարդաց իր դասախօսութիւնը։ Տիկինը շատ բարեխիղճ էր վերաբերվել իրան խօստմունքին և մեծ աջողութեամբ կարդաց իր ճառը, Թողնելով լաւ տպաւորութիւն հանդիսականների վրա ու արժանացաւ անթիւ և երկարատև ծափահարութիւնների։

Երեկոյթի երաժշտական մասում մասնակցում էին Քեմնիցից հրաւիրված Թատրօնի առաջնակարգ երգչուհի օր. Մ. Գոտլիբ, տիկին Ա. Հունգեր և պ. Եակօբս, որոնք իրանց երաժշտական կատարելագործած արհեստով գեղարուեստական մեծ զուարճութիւն պատճառեցին հասարակութեանը։ Օր. Ֆրիդէկ միանգամայն սքանչելի կերպով արտասանեց Ռ. Պատկանեանի «Արաքսի արտասուքը» և «Հազարից մինը» բանաստեղծութիւնների գերմաներէն Թարգմանութիւնները. երկու ոտանաւորներն էլ, որ խիստ յարմար էին երեկոյթին, կենդանի տպաւորութիւն Թողեցին հասարակութեան վրա, որը և արտասանող օրիորդին անթիւ ծափահարութիւնների արժանացրեց։ Երեկոյթում բոլոր մասնակցողները սիրով յանձն էին առել ձրիաբար մասնակցելու։

Խմբին մասնակցում էին Թէ տիկիններ և Թէ պարոններ՝ հայկական ազգային տարազով. կային դրանց Թւում և ռուսներ։

Ապա երեկոյթի երրորդ բաժնում տեղի ունեցան կենդանի պատկերներ «հայկական կեանքից», որոնք առանձնապէս խոր տպաւորութիւն Թողին հասարակութեան վրա. նոյնպէս հետաքրքրեցին և զուարճացրին հայ կանանց և երիտասարդների ազգային պարերը։ Այնուհետև տեղի ունեցան եւրոպական պարեր, որոնք շարունակվեցին մինչև ժամը 5-ը։ Բազմութիւնը հեռացաւ շատ գոհ տրամադրութեան տակ։

Առաջին անգամն է, որ Միթվայդայում այսպիսի երեկոյթ է տեղի ունենում։ Հայ ուսանողների Թիւը շատ փոքր է, ընդամենը 7 հոգի։ Եւ մխիթարական է, որ աջողվեց մի հետաքրքրական երեկոյթ կազմակերպել, որ մեծ հաւանութիւն գտաւ գերմանական հասարակութեան կողմից։

Ուսանող՝ Ա. Աղամալեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Համադան, յունվարի 28-ին

1902-ի աշնանը, Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդարանի կողմից Համադան ուղարկվեց իբրև փոխանորդ առաջնորդարանի՝ Խորէն վարդապետ Վարդանեանցը, որի գալուստը տեղացի հայ բնակիչների համար նորութիւն էր։

Նորութիւն էր, որովհետև Պարսկաստանի խորքերում բնակված այս հայ ժողովրդի համար նոր բան է տեսնել մայր եկեղեցու հոգևորական և զարգացած մարդ։ Երբէք այս կղզիացած ժողովուրդը չէր երևակայի—(մանաւանդ ամերիկացի միսիօների այս կողմերը մուտք գործելուց յետոյ)—որ կարող է պատահել զարգացած հայ հոգևորական։ Այստեղ այնպէս են հասկանում, Թէ եթէ հայը զարգանայ, անպայման կերպով նա կը դառնայ բողոքական։

Ուրախութիւն է մեզ համար, որ գտնվեցաւ մի մարդ, որը զոհաբերութիւն է արել, գալով մեզ մօտ՝ ժողովրդի ցաւերը ամոքելու նպատակով։ Մինչև այսօր մեզ երջանկացնելու համար գալիս էր «միսիօները»։ Նա ասում էր Թէ գալիս է ժողովուրդը լուսաւորելու համար, բայց այդ լոկ անուն էր։ Ժողովրդին սովորեցնել ազնիւ ձգտումներ, լուրջ աշխատութիւն ազգային ինքնուրոյնութիւն—այդ չի եղել. միսիօները հարևանցի հայեացք է ձգել և անցել, Թէև յանուն այս ժողովրդի կրթութեան քանի տասնեակ հազար Թումաններ փչացել է և անհասների հարստանալու միջոց է դարձել։ Յոյս կայ, որ այժմ ժողովուրդը գործով համոզվի, որ իր վէրքերը իր արիւնակից եղբայրը կարող է բուժել և ոչ ամերիկացի «մարդասէրը»։

Ա. Զ. Զոհրաբեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վենետիկից հեռագրում են «Berl. Tageblatt» լրագրին. «Վենետիկում ապրող հայ հրապարակախօս Արփիար Արփիարեանի կեանքի դէմ գիշերով տեղի ունեցաւ սպանութեան փորձ։ Նրա վրա երեք անգամ ատրճանակ արձակվեց։ Ենթադրում են, որ սպանութեան փորձի աստառը քաղաքական է։ Յանցաւորները ձերբակալված չենն»։

—Մակեդոնիայում տեղի ունեցած փարհուրելի անցքերից, որոնք սկսվել են անցեալ տարի և շարունակվում են մինչև հիմա, ազատ էր մնացել միայն Ադրիանօպօլսի վիլայէթը. բայց այժմ Թիւրքերն իրանց գազանութիւններն սկսել են այնտեղ ևս գործադրել։ Եւրոպայից մոռացված այդ Թիւրքական վիլայէթի քրիստոնեայ ազգաբնակութեան դրութիւնը օրէցօր աւելի վատթարանում է, և ամենևին զարմանալի չի լինի, եթէ այդ ազգաբնակութիւնը յուսահատված կը վճռէ հետևել մակեդոնական վիլայէթների քրիստոնեաների օրինակին և զէնքը ձեռքին վեր կը կենայ դիմադրելու նրանց գազանութիւններին։

—Կ. Պօլսի կենտրոնական Թաղում, «Բերա» հիւրանոցի մօտ, մօտ օրերումս տեղի ունեցաւ մի արիւնահեղ կռիւ Թիւրքերի և բուլղարների մէջ։ Այդ Թաղի տներից մէկում ապրող բուլղարները հրաժարվեցին ներս Թողնել ոստիկանութեան, որ գնացել էր ձերբակալելու, իր ասելով, մակեդոնական կոմիտէտի անդամներին։ Բուլղարները դիմադրեցին ոստիկաններին. օգնութեան հասան ժանդարմներն և ծովային զինուորները։ Սկսվեց տան պաշարումը և փոխադարձ հրացանաձգութիւն, որի ժամանակ մահացու վէրքեր ստացան 7 բուլղարներ, սպանվեցին երեք Թիւրք զինուորներ, իսկ մի կին և իրեք երեխայ ծանր վէրքեր ստացան։ Այս դէպքը սարսափ ազդեց Թիւրք մայրաքաղաքի բնակիչների վրա. նրանք փակվեցին իրանց տներում և շինեցին բարիկադներ։ Երեկոյեան խաղաղութիւնը վերականգնվեց։ Թիւրքերը աշխատում են բացատրել այդ արիւնհեղութիւնը նրանով, Թէ իբր իրանք կամենում էին ձերբակալել յայտնի գողերի։

—Այն միջոցները, որ ձեռք է առել բուլղարական կառավարութիւնը մակեդոնական կոմիտէտների դէմ, աւելի լուրջ են, քան կարելի էր կարծել։ Կառավարութիւնը կարգադրել է գրաւել այն բոլոր գումարները, որ կոմիտէտները պահում էին բանկերում և բոլոր Թղթերն ու դոկումէնտները, որոնք վերաբերում են յեղափոխական գործին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 փետրվարի

ԲԵԼՕՍՏՕԿ։ Փետրվարի 18-ին, առաւօտը, Վօլկովիսկ և Զելվա կայարանների մէջ տեղի ունեցաւ ապրանքատար գնացքների ընդհարում։ Շոգեկառքները և ութը վագօն ջարդված են։ Մարդկանց հետ դժբաղդութիւն չէ պատահել։ Պատճառը—սլաքի սխալ դնելն է։

ՎԱՐՇԱՎԱ։ Կայացաւ գիւղատնտեսական կարիքների մասին հոգացող մասնաժողովի վերջին նիստը։ Քննվեցին հրդեհների առաջն առնելու միջոցների, կատարելագործված մեքենաներ տարածելուն, գիւղական հողերը արհեստական միջոցով պարարտացնելուն և գիւղական բարեգործութեան վերաբերեալ հարցերը։

ԼՕՁ։ Ապրիլին կը բացվի ապրանքատար և մարդատար գնացքների երթևեկութիւն Կոլիւշկա—Լօձ գծով։ Կոլիւշկայի ճանապարհը և նրա ճիւղաւորութիւնը շատ յարմար են հարաւարևմտեան ճանապարհով ապրանք ուղարկողների համար, եթէ նրանք ապրանքը անմիջապէս Լօձ են ուղարկում։

ԿԻԵՎ։ Բացվեց հարաւային շրջանի ալիւրավաճառների համաժողովը։ Նախագահ ընտրված է Լազար Բրոդսկին։ Ընտրված է մի մասնաժողով ջրաղացների հարկերը կարգաւորելուն վերաբերեալ հարցերը մշակելու համար։

ՆՕՎԳՈՐՕԴ։ Արսենիյ եպիսկոպոսի մարմինը դրին եկեղեցի. ներկայ էին Գուրիյ արքեպիսկոպոսը, նահանգապետը, ազնուականութեան նահանգական պարագլուխը, քաղաքային հոգևորականութիւնը և ժողովրդի բազմութիւն։ Թաղումը տեղի կունենայ շաբաթ օրը, Խուտինի վանքում։ Փետրվարի 19-ին երեկոյեան Պետերբուրգեան Թաղում մի անյայտ չարագործ իր հարուածներով ջախջախեց կօլոնիստ Տաքերտի երեք փոքրահասակ աղջիկների գլուխները—ծնողների բացակայութեան ժամանակ։ Նրանցից մէկը մեռաւ, իսկ երկուսը տանջվում են տագնապի մէջ։

ՄՕՍԿՎԱ։ Գիւղատնտեսական կարիքների մասին հոգացող նահանգական մասնաժողովը, քննելով գաւառական մասնաժողովների եզրակացութիւնները, այն կարծիքն յայտնեց, Թէ անհրաժեշտ է գիւղատնտեսական լայն կրթութիւն, ուստի և ցանկալի են՝ փորձնական դաշտեր ու կայարաններ հիմնելը, ժողովրդական ընթերցանութիւններ ու գիւղատնտեսական գրադարաններ կազմակերպելը, գիւղատնտեսական հանրամատչելի գրքեր ու բրօշիւրներ հրատարակելը, ցուցահանդէս կազմելը և աչքի ընկնող տնտեսութիւնների նկարագրութիւնն ու պարգևաբաշխութիւնը, առանց տեսակի խտրութեան։ Քննութեան առնվեց մասնաժողովի 19 անդամների յայտագիրը։ Առաջին կէտը—գիւղացիների իրաւաբանական յարաբերութիւնների և նրանց ընդհանուր դատարան շնորհելու մասին—չը քննվեց, որովհետև վերաքննվում է ընդհանուր կանօնադրութիւն գիւղացիների մասին. երկրորդ կէտը—ընդհանուր կրթութեան զարգացման մասին—որոշվեց քննութեան ենթարկել. իսկ այն հարցերը, որոնք վերաբերում են ժողովրդի շատ գործածած առարկաները կողմնակի հարկից ազատելուն, հարկատւութիւնը փոփոխութեան ենթարկելուն և եկամուտի համեմատ հարկ սահմանելուն—պէտք է քննվեն հետևեալ նիստերից մէկում. այդ մի և նոյն ժամանակ պէտք է քննվի և այն հարցը, Թէ քիչ ուշադրութիւն է դարձնվում տնայնագործութեան վրա, որ և խանգարում է նրա զարգացմանը։ Յայտագրի վերջին կէտը, որ զեմստվօների վերակազմութեան մասին է, ճանաչված է իբրև աւելորդ մասնաժողովի քննութեան համար։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատ. ծովային գործերի քարտուղար Ֆօրստէրը առաջարկութիւն է անում, որ ծովային վարչութեանը իրաւունք տրվի պահեստի նաւազօրքի Թիւն աւելացնելու և ծովային զանազան ծառայութիւնների համար կամաւորներ հաւաքելու, որոնց պարտականութիւնը կը լինի պատերազմի ժամանակ աշխարհի բոլոր մասերում ծառայելու։ Պալատը առաջին ընթերցանութեամբ ընդունում է առաջարկութիւնը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Համաժողովն ընդհատեց իր նիստերը։ Պատգամաւորների պալատը վերջին նիստում ընդունեց երկու պալատների միացած կօնֆերենցիայի զեկուցումը ծովային օրինագծի մասին, որ Րուզվելտը ստորագրել էր նիստերը փակվելուց առաջ։ Թոյլ է տուած շինել երեք պատերազմական նաւ 16,000 տօնն բովանդակութեամբ և երեք նոյնանման նաւ 13,000 տօնն բովանդակութեամբ։ Նախօրօք ենթադրված երեք կրէյսէրների համար միջոցներ չեն նախատեսնված։

ՏԱՆԺԵՐ։ Մէնեբբի մինիստրը քարուքանդ արեց Սէնխաջա ցեղի բնակավայրը և այրեց Այն—Մեդինա քաղաքը. բնակիչներից ազատվեցին միայն 40 հոգի։ Խիատխա ցեղը հնազանդվեց սուլթանին։

«Correspondenzie d'Espana» հաղորդում է, որ շարժում է սկսվել օտարերկրացիների դէմ։ Երկու սպանացի վիրաւորված են։ Սպանական դեսպանը լուրջ առաջարկութիւններ արեց.

21 փետրվարի

ՖԵՑ։ «Heraldo» լրագիրը հաղորդում է, որ սուլթանի զօրքերը ապստամբ ցեղերի դէմ կատաղի կռիւ մղելուց յետոյ յետ քաշվեցին։ Կորուստն է մօտաւորապէս 50 սպանված և 100 վիրաւորված։

ՎԻԵՆՆԱ. Չեխական կլուբը որոշեց հետևեալ երեքշաբթի բիւջէտի առաջին ընթերցանութեան ժամանակ լիազորութիւն տալ Գերօլդ, Կրամար և Ցացէկ պատգամաւորներին՝ յայտարարելու, Թէ կլուբը դիմադրական դիրք է բռնել կառավարութեան դէմ. կլուբը վճռեց ամեն կերպ աշխատել գցելու մինիստրութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Правит. Вѣстн.»-ում տպագրված է Ռուսաստանի և Ամերիկայի Միացեալ-Նահանգների ընտրած միջնորդ դատաւոր Ասսէրի վճռի բնագիրը, որ վերաբերում է այն հարցին, Թէ ինչու ռուսաց կրէյսէրները 1891—1892 Թ. Բերինգօվօ ծովում բռնել էին ամերիկական 4 նաւակներ։ Դաշնակցական կառավարութիւնը պահանջել էր վնասի փոխարէն ընդամենը 343,242 դօլլար, բացի 6o/o այդ գումարից։ Միջնորդ դատաւորը վճռեց ընդամենը 101,279 դօլլար և 6o/o տոկոսագումար—մինչև վճարման օրը։ Յիշեալ գործերը միջնորդ դատաւորի յանձնելուց պարզ երևում է, Թէ ռուսաց կառավարութիւնը որպիսի նշանակութիւն է տալիս վիճելի խնդիրները միջնորդ դատարանով քննելուն, Թէև ամերիկական նաւակների ձերբակալելը կապ ունի Բերինգօվօ ծովում ծովահորթեր որսալու հարցի հետ։ Ասսէրի վճիռը վերաբերում է միմիայն վիճելի խնդրին. իսկ ընդհանուր բնաւորութեան խնդիրների մասին ռուսաց կառավարութիւնը վերապահել է իր գործողութիւնների ազատութիւնը, որպէս զի ապագայում այդ հարցերին այս կամ այն ուղղութիւնը տայ իր պետական իրաւունքների և շահերի համեմատ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակէ օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզատեռ. հիւանդ.
ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1$\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1$\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (էլեկտրաբուժ.)։
Ն. Ս. ԼԻՒԲԵՑԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժ) ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—7—7$\frac{1}{2}$ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7$\frac{1}{2}$—8 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7$\frac{1}{2}$—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. ՌՕՎԱՆԻՏՑԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. ընդ. 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատանը, փետրվարի 27-ին, ցերեկվայ ժամի 1-ին, նշանակված է երկրորդ աճուրդ՝ կապալով տալու կառքերից, սայլերից և խոշոր ու մանր կենդանիներից վերցնվող տուրքը Մնացականեան կամրջից անցնելու համար։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Ուպրավայի 4-րորդ բաժանմունքում բոլոր ղի օրերը՝ առաւօտեան ժամի 9-ից մինչև 3-ը։ Փակ ծրարներ կընդունվեն մինչև փետրվարի 27-ը։ Աճուրդի համար իւրաքանչիւր մասնակցող պէտք է ներկայացնէ 15,000 րուբլու գրաւական։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ուսուցիչ ՍՏՐՈՒՄԲԷԼԼՕՅԻ ՄԵՂՈՒԱՆՈՑԸ ԵՒ ՄԵՂՈՒԱՊԱՀԱԿԱՆ իրեղէնների կենտրոնական պահեստը ընդունում է պատուէրներ՝ մատակարարելու մեղուապահական գործիքներ, մեղրատու բոյսերի սերմեր, արհեստական մոմաթերթ և Դադանի սիստեմի փեթակներ՝ լորենու փայտից՝ հատը 7 րուբլով։

2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

ՄԱՅՐԵՐԸ

(Պատմուածք)
Գինն է 15 կոպ.

Դիմել՝ Գուտտենբէրգ գրավաճառանոցին և հեղինակին. Тифлисъ, Редакція „Мурчъ". 7—10

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

„ՁԳԱՑՄՈՒՆՔ"

Զուտ բանաստեղծական-գեղարուեստական հանդէսի առաջին գիրքը արդէն պատրաստվում է և լոյս կը տեսնէ յուլիսի 1-ին արտասահմանում։ Հրատարակութիւնը կը լինի շատ շքեղ՝ բանաստեղծների և նիւթերին համապատասխան պատկերներով։ Հրաւիրում ենք ռուսահայ և թիւրքահայ բանաստեղծներին աշխատակցել։ Ոտանաւորները պիտի լինեն ուրախ և զգացմունք արտայայտող, որոնց ընտրութիւնը լինելու է խնամքով։ Մեծ ծաւալով այս բացառիկ գիրքը կը լինի «ցուցահանդէս վառ բանաստեղծական գոհարների», ուր ընթերցողը պիտի տեսնէ թէ արեւելեան և թէ արեւմտեան, (հին և նոր) բոլոր հայ բանաստեղծների ստեղծագործութիւնների բնաւորութիւնը, զգացման աւիւնի և կորովի չափը, ծանօթանալով (լուսանկարների միջոցով) և նրանց անձնական դէմքերի հետ։ Ամեն հայ մարդ թող հաճութիւն ունենայ ձեռք բերելու ՍԵՂԱՆԻ ԶԱՐԴ։ Գինը կարժենայ 3 րուբլի, հրատարակվելուց յետոյ կը բարձրացնվի։ Նիւթերը, բաժնեգները և նուէրները ուղարկելու են իմ հասցէին՝ Шулаверы, Григорію Баласянцъ. Արդէն լոյս տեսած առձեռն «Զգացմունք» ժողովածուի համար կը խնդրենք այսուհետեւ ինձ չը դիմել, այլ «Գուտտենբերգ» գրավաճառին, որին յանձնել եմ ամբողջապէս։

Խմբագիր-հրատարակիչ՝
2—3 Գրիգոր Բալասեան

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ Ատենի մէջ նշանակված է ԱՃՈՒՐԴ ներկայ փետրվարի 24-ին, առանց կրկնաճրդի, կապալով տալու եկեղեցապատկան կղզին, որ գտնվում է Վանայ աւագ եկեղեցու հանդէպ։ Աճրդին մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն սահմանված գրաւական, իսկ պայմանների հետ կարող են ծանօթանալ կօնսիստօրիայի դիւանատանը։

Անդամ կօնսիստորիայի՝
Գրիգոր աւ. քահ. Տէր-Բարսեղեանց
1—2

Էժան գնով վաճառվում

են մի զոյգ ձիեր, 6 տարեկան, 4$\frac{1}{2}$ վերշօկ, առանց պակասութիւնների։ Ձիերը բերված են Ռուսաստանից։ Վաճառվում են նաև զանազան կառքեր, արտասահմանում շինված։ Տեսնել կարելի է ամեն օր 9—2 ժամը. Վօրօնցօվսկայա № 18. գաւթում. հարցնել կազնաչէյին և էկզէկուտօրին։ Ձիերը պատկանում են գեներալ Կարպօվին։ 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ յայտնում է, որ այս փետրվար ամսի 25-ին, առաւօտեան ժամի 10-ին, մասնաժողովի նախագահի բնակարանում (Սուդեբնայա փողոց, № 68) նշանակված է աճուրդ՝ 1) կապալով տալու ատաղձագործական աշխատանքներ, 2) կտրելու և տաշելու մօտ 170 քառակուսի սաժէն քար անկիւնների համար և 3) մատակարարելու մօտ 5000 պուդ երկաթեայ գերաններ։ Յիշված աշխատանքների կատարման և կապալի պայմանները կարելի է տեսնել ամեն օր մասնաժողովի գործավարի մօտ (Սուդեբնայա փողոց, № 10, բն. 7)։ Այն անձինք, որոնք ցանկանում են մասնակցել աճուրդին, պէտք է ունենան անցագիր կամ վկայութիւն իրանց անձնաւորութեան մասին և գրաւական ներկայացնեն ոչ պակաս քան 5% յայտնողի գնի։ Գրաւականները կարող են լինել առձեռն դրամ կամ տոկոսաբեր թղթեր, որոնք ընդունվում են իբրև գրաւական արքունի կապալներում։ 2—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

գրախանութում վաճառվում են

«Գերմանիայի հայ ուսանողները», Գ. Մէլիք-Կարագեօզեանի—20 կ.
«Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճկահ. համար, նոյնի—35 կ.
Ամայի դաշտում, Մակսիմ Գօրկիի, թարգմ. Ս. Մ. Իսահակեանի—5 կ։
«Դէպի վեր». դրամատ. պօէմա Լ. Մանուէլեանի—10 կ.
«Կենդանական կամ բուժական մագնետիզմ», թարգմ. Փարամազ—15 կ.
«Ժողովրդի տօնացոյցը», տօների մասին պարզ գիտելիքներ, Բարկէն վարդ. 30 կ.
«Բիւրդ պէկ», հայ-քրդական կեանքից, Տէր-ցեանի—20 կ.
«Մանկութիւն երեելի արանց և նշանաւոր մանկունք—70 կ.
«Ի՞նչ է երջանկութիւնը», Տօլստօյի II տպագրութիւն—5 կ.
«Նուագներ և Մուսա», Յ. Թումանեանի—50 կ.
«Մայրական սէր կամ դժբախտ գիշեր—60 կ.
«Փորձ մը քննասիրութեան վրա, թարգմ. Գ. Մալխաս—50 կ.
«Աւետարանը պատմութեան մէջ, թարգմ. Ա. Տէր-Յարութիւնեան—20 կ.
«Նոր պետութեան վերաբերմունքը դէպի կրօնը», թարգմ. Գ. Ալթունեանի—25 կ.
«Եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները», թարգմ. Պ. Տէր-Յարութիւնեան—30 կ.
«Ջաւախքի աղէտը», ականատեսի տպաւորութիւններից—10 կ.
«Անիւտան և Դիմակ», Չեխովի, թարգմ. Ե. Եսայեանի—8 կ.
«Խորտակված սէր և գրբացի սարուկներ», նոյնի—35 կ.
«Հայ ժողովրդական հէքիաթներ», IX գիրք, Տ. Նաւասարդեանի—50 կ.
«Դամադ-Միրզա և Զօհրաբ խանում», Ա. Մխիթարեանի—30 կ.
«Մաղիկ ժամանակի երգեր, օրիորդ Մակաբեանի—50 կ.
«Մի գաղթականի համառօտ կարծիքները», Աբիստակէս—50 կ.
«Թլուատ Դաւիթ», ժողովրդական վէպ, Ա. Աբեղեանի 30 կ.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ", Лорисъ-Меликовская ул.; № 11, Г. Галустяну. 2—3

!!ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ!!

ԵՂԲ. Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

որը գտնվում է Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, I գիմնազիայի հանդէպ,

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ՄԻՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹՈՎ

այն է փետրվարի 22-ից մինչև մարտի 5-ը

ՉԸ ՏԵՍՆՎԱԾ ԱՐԺԷՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Անցեալ տարվայ ամառային և ձմեռվայ սեզօններից մնացած տղամարդկանց, կանանց և երեխայոց հագուստների, որոնք առանձնացրած են միւսներից և վերջնական գները նշանակված էտիկէտների վրա կապոյտ մատիտով։

Ստացել ենք արտասահմանեան և ռուսական ամենայայտնի գործարաններից, մեծ քանակութեամբ զանազան տեսակ տրիկօներ և մահուդներ։

Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ, ծախում ենք նաև արշինով։

Ստացել ենք և չարունակ ստանում ենք եւրոպական ամենավերջին տարազով կարված տղամարդկանց և կանանց հագուստներ և վերնազգեստներ։

Գների արժանութեան կողմից չունի ոչ մի մրցող։ 1—10

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Առեւտրական Ընկերութեան Վարչութիւնը

Սրանով տեղեկացնում է պ.պ. բաժնետէրերին, որ համաձայն ընկերութեան պայմանագրի 6-րդ յօդուածին, նա նշանակել է մարտի 10-ից մինչև 20-ը երրորդ վճարը 5% քանակութեամբ, այսինքն հինգ րուբլի ամեն մի փայից։ Դրամի ընդունելութիւնը կը կատարվի վարչութեան գրասենեակում (Երևանեան հրապարակ, տուն Խարազեանի, գաւթում) ցերեկվայ ժամի 1—3 և երեկոյեան ժամի 7—9։ (22-ին, 23-ին և 25-ին) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետևեալ նոր գրքերը՝

ԱԲԵՂԵԱՆ Ա., Թլուատ Դաւիթ, ժողովրդական վէպ, Թիֆլիս, 1902 թ. գինն է 30 կոպէկ.
ԱՀԱՐՈՆԵԱՆ Ա., 1) Մայրերը, Թիֆլիս 1903 թ. գինն է 15 կոպ., 2) Խեղճերը, Թիֆլիս 1902 թ. գինն է 1 րուբլի.
ԱՄԻՐՃԱՆԵԱՆ Տ., Ուսեալ պանդուխտ, վանեցոց կեանքից, Թիֆլիս 1903 թ. գինն է 15 կ.
ԵՍԱՅԵԱՆ Ց., Գրբացի սարուկներ, պատկեր, Թիֆլիս 1903 թ. գ. 5 կ.
ԼԻՏՏՕՆ Լ., Պոմպէյի վերջին օրերը, թարգ. անգլ. Ց. Միրզայեանի, Թիֆլիս 1903 թ. գինն 1 րուբլի 50 կոպէկ.
ՄԱԼԽԱՍԵԱՆ Ց., Հօրոտ-Մօրոտ, պատկերներ իրական կեանքից, Բ. գիրք, Թիֆլիս 1903 թ. գ. 30 կ., իսկ Ա. գիրքը—30 կ.
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Ց. ա. ք., Հայոց եկեղեցու համառօտ պատմութեան դասագիրք, Թիֆլիս 1903 թ. գինն է 35 կ.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (կ. հ. շ.) 4—4

ԻՒՋԲԱՇԵԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

(Բագու. Ստանիսլավսկայա և Բօնդարնայա փողոցների անկիւն, տուն Աշուրօվի, Տեխնիկական ուսումնարանի նոր շինութեան հանդէպ)։

Սովորեցնում է երեխաներին սկզբնական գրագիտութիւն հնչական մեթօդով։ Պատրաստում է պետական բոլոր միջնակարգ դպրոցների երեք դասարանների համար։ Աւանդվում են և հայոց լեզուի դասեր։ (չ. շ.) 10—10

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՆԱԴԵԺԴԱ"

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական դրամագլուխը . . . . . 1,650,000 րուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . 2,664,803 »

I. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ Հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր ծախսեր ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռներ յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտօնեալ պայմաններով առանձին տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրեան նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բագուում եւ Կրասնովօդսկում։

Բեռները անընդհատ ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

III. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, տարանտասների, վագօնների և վագօն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի մօտ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի պրօսպէկտի վրա, № 10-րորդ տանը։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բագւում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվօրցօվայա փողոցի վրա, վրաց ազնուականների տանը։ Տելեֆօն № 108 (Ա. ա. կ.) 41—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 21 Февраля 1903 г.
Электропечатная Груз. Изд. Т—ва, В.-Ванкская ул.